

ՄԱՅԻՍԸ ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԱՄԻՄՆ Է



Տրացյա ՀՈՎՏԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Ես ընկել եմ պագշոտ Շամիրամի նետից,
Հին Հռոմն է զարկել ինձ մահացու խոցով,
Իմ արյունն են ոթել, խառնել Տղմուտ գետին,
Իմ լեզուն են այրել ատրուշանի բոցով:

Խաչ են դաջել կրծքիս մի բարբարոս զենքով,
Արաբական ձիու սմբակի տակ գցել,
Ինձ խարույկ են հանել մոնղոլների ձեռքով,
Սիրտս օսմանական սվինների ցցել:

Ինձ հայրենի իմ տան թխկենուց են կախել,
Եվ հոգիս են բանտել շղթաներով երկաթ,
Ինձ զարկել են, խարկել ու կենդանի թաղել...
Բայց ես դեռ կամ:



Ճակատագրի բերումով մայիսը դարձավ մեր հաղթանակների, մեր ապրելու իրավունքի, մեր անանց հպարտության, բերկրամբի, մեր փառապանծ գոյամարտերի, հաղթելու կամքի առավելագույնը:

Մեր մայիսյան համազգային սխրանքների սկիզբը 451-ին էր, Ավարայրի դաշտում, երբ իրար բախվեցին պարսկական 300 հազարանոց բանակը և 60 հազարանոց հայկական ուժերը: Մեր պատմության մեջ այն Վարդանանց պատերազմի օրն էր, մեր անկարելի սխրանքի, անհուսալի կռվի ու «Մահ իմացեալի» համազգային հաղթանակի օրը: Ասում են, որ Ավարայրի ճակատամարտից հետո, հայերին հավատալիք չէր, որ մեր պարտադրող պարսից ճակատարար արքան ասել է՝ «Հայեր, կռվո՛ւմ եք, ապրեցե՛ք»: Ահա սրա համար է, որ մենք հպարտանում ենք՝ Ավարայրը համարելով մեր ժողովրդի, հայի բազմի հաղթանակի ճակատամարտ:

Մայիսյան մեր հաջորդ հաղթանակը 1918 թվականի մայիսին էր: Հայոց եղեռն իրագործած, հային հայրենիքից զրկած մարդակուլ օսմանը արշավեց իր հողի մի պատառի վրա ծվարած Հայաստան կոչվող երկրի վրա՝ իրագործելու իր մարդակուլ ծրագիրը՝ աշխարհի երեսից վերացնելու հայ ցեղն ու հայ անունը:

Ինչպես և 451-ին, թշնամին հզոր էր ու բազմաբանակ: Իրար հետևից հեշտությամբ գրավելով հայկական քաղաքները՝ թուրքական խորշակը հասավ Սարդարապատ կայարան: Մինչև երևան մնում էր մի քանի ժամվա ճանապարհ: Ոչնչացման, անհետացման օրհասը կախվեց մեր թշվառ երկրի վերջին պատառի վրա:

Հայոց ոգու անկարելի նոր սխրանք-անձնագրի լույս էր պետք՝ ազգովին չմորթվելու, ապրելու ու գոյատևելու համար: Հայաստան ու հայ ժողովուրդ և ամենակուլ, մինչև ատամները զինված թուրքական բանակներ: Ուժերն անհավասար էին, հույսը մեռնում էր:

Սակայն, ինչպես և Ավարայրում, բռնցքվեց հայ ժողովուրդը և հիշեց՝ «Հայեր, կռվո՛ւմ եք, ապրեցե՛ք»: «Մահ իմացեալի» ոգին էր թևածում Սարդարապատի, Ապարանի, Ղարաբաղի ճակատներում: Կռվի էր ելել զենք բռնելու ընդունակ ամեն ոք: Եվ խորհրդանշական մի փաստ. Սարդարապատի ռազմաճակատի իրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանը ձերմակ ձիով էր և կարմիր թիկնոցով, ինչպես Վարդան Մամիկոնյանը: Բոլոր ճակատներում հայերը պարտության մատնեցին թուրքական զորակազմի ուժերին, որոնք խուճապահար փախուստի դիմեցին: Փառավոր հաղթանակ, որից չօգտվեցին Հայաստանի Ազգային խորհրդի ապիկարները:

...Եվ կրկին մայիս, երբ աշխարհին տիրելու նկրտումներով մի խելագար, որ ֆաշիզմ էր խորհրդանշում, 1945-ի մայիսի 9-ին ծնկի եկավ հակահիտլերյան կռաւիգի առջև: Մարդկության պատմության այդ ամենաարյունալի, ամենադաժան ու անմախաղ պատերազմի գլխավոր ծանրությունն ընկավ Խորհրդային Միության ուսերին, երկիր, որի մի փոքրիկ և հպարտ մասն էինք մենք հայերս: Այո՛, Մեծ հայրենականը մահ հայի պատերազմն էր: Պատերազմ այն թշնամու դեմ, որ ակտիվ մեղսակիցն էր Հայոց մեծ եղեռնի, որի դաշնակիցն էր մեր դարավոր թշնամի թուրքը, և որի արյունաբերու հրոսակները սահմանի վրա սպասում էին Ստալինգրադի անկմանը, որ մտնեին Հայաստան և ի վերջո իրականացնեին իրենց դարավոր ճիվաղային ծրագիրը՝ մորթեին, ոչնչացնեին վերջին հային:

Մեծ հայրենականը, այո՛, մեր պատերազմն էր: Այդ էր պատճառը, որ 600 հազար հայորդիներ՝ Հայաստանից, խորհրդային հանրապետություններից և Սփյուռքից կռվի էին ելել ֆաշիզմի դեմ և իրենց հերոսությամբ ծանրակշիռ ավանդ ունեցան մեծ հաղթանակի կերտ-

ման գործում: Փոքրաքանակ հայ ժողովուրդը տեսակարար կշռով ուներ ավելի շատ զորահրամանատարներ, գեներալներ և հերոսներ, քան որևէ ուրիշ ժողովուրդ: 300 հազար հայորդիներ իրենց կյանքը դրեցին Մեծ հաղթանակի գոհասեղանին:

...2012 թվականի մայիսի 10-ին անկախ, ինքնիշխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում տեղի ունեցավ զորահանդես՝ նվիրված Մեծ հայրենականում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակին, Հուշի ազատագրմանը, Հայոց բանակի 20-ամյակին:

Ստեփանակերտի իրապարակով անցան Հայրենական պատերազմի վետերանները, Արցախյան ազատամարտում ծնված Հայոց բանակի զինվորները, սպաները: Նրանց շարքերում էին մահ Հուշի բերդաքաղաքն ազատագրած հերոսները: Հուշի ազատագրումը դարձավ Արցախյան հերոսամարտի փառքն ու պսակը: Արցախյան գոտեմարտը՝ օրհասական պահին բռնցքվելու, միասնական լինելու մեր զարմանալի շնորհն էր, որը ծնունդ էր առել Ավարայրում, շարունակվել Սարդարապատում, Մեծ հայրենականի ճակատներում և իհարկե՝ Արցախյան գոտեմարտում: Մենք կռվում էինք մեր դարավոր թշնամու դեմ, մենք վրեժ էինք լուծում մոլոր թուրքից, որը բնաջնջեց միլիոնավոր անմեղ մարդկանց: Եվ ես համոզված եմ՝ Ստամբուլում և Բաքվում մեր դարավոր թշնամին՝ հալածված բորենու կատաղությամբ և գազանային ատելությամբ դիտում էր մեր բանակի խրոխտ ու հպարտ երթը և զորահանդեսի մասնակիցների դեմքին տեսնելով հաղթողի կամքը և վճռականությունը անգոր կրծտացնում էր ատամները: Այո՛, մենք, երբ պետք է՝ կռվում ենք, և վայ նրան, ով նոր ոճի կորոծա մեր ազատության, միակ հայրենիքի՝ հայի Հայաստանի դեմ:



ՄԵԾԱՎԱՍՏԱԿ ԵՐԿՐԱԲԱՆԸ

ՀՈՎՀԱՆՆԵԱ ՄԱՊԱՔՅԱՆԻ ԾԱՆՊԱՆ 100-ԱՄԿԻՆ

Հայաստանի երկրաբանական հանրությունը վերջերս մեծ շուքով նշեց հայ տաղանդավոր, վաստակաշատ ու նշանավոր գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ ԳԱ Գիտություններ երկրի մասին բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, Հայաստանի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ԽՍՀՄ և Հայաստանի պետական մրցանակների դափնեկիր, երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Մաղաքյանի ծննդյան 100-ամյա հոբելյանը:

Հ. Մաղաքյանը ծնվել է 1914 թ. ապրիլի 6-ին, Թբիլիսիում, ծանաչված բժշկի ընտանիքում: Մաղաքյանների ընտանիքը, գաղթելով Երզրումից, բնակություն է հաստատում Ախալքալաքում, որտեղ բարեկամական հարաբերություններ է հաստատում ապագայում ծանաչված երկրաբան, Հայաստանի ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի հիմնադիր տնօրեն, պրոֆեսոր Հովհաննես Կարապետյանի ընտանիքի հետ: Եվ ինչպես նշում է ինքը՝ Հ. Մաղաքյանը, այդ հանդիպումները որոշիչ դեր խաղացին ապագա մասնագիտության ընտրության հարցում:

1930 թ. Հ. Մաղաքյանը ընդունվում է Թբիլիսիի անդրկովկասյան լեռնամետալուրգիական ինստիտուտ, այնուհետև, 1932 թ. տեղափոխվում է Լենինգրադ՝ ուսումը շարունակելու Լենինգրադի լեռնային ինստիտուտում, որը և փայլուն առաջադիմությամբ ավարտում է 1935 թ.: Իր առաջին ուսանողական պրակտիկան նա անց է կացնում Հայաստանում, անվանի երկրաբան, Հայաստանի երկրաբանության հմուտ գիտակ, պրոֆեսոր Վ. Կոտլյարի ղեկավարությամբ: Իսկ դիպլոմային պրակտիկան անց է կացրել ԽՍՀՄ ԳԱ Տաջիկստանի Պամիրյան արշավախմբում, որը հետագոտում էր Տաջիկստանի սկարնային հանքավայրերը: Ինստիտուտում ավարտելուց հետո Հ. Մաղաքյանն աշխատանքի է նշանակվում Տաջիկստանի երկրաբանական վարչությունում և միաժամանակ, 1937 թ. ընդունվում է Լենինգրադի լեռնային ինստիտուտի ասպիրանտուրա: Աշխատանքի տարիներին հավաքած նյութերը հիմք դարձան նրա «Ձերավշան-Հիսարյան լեռնային շրջանի սկարնային գոտու մետաղածնությունը» թեմայով թեկնածուական ատենախոսության, որը 1940 թ. հաջողությամբ պաշտպանվել է Լենինգրադի լեռնային ինստիտուտում:

1940 թ. Հ. Մաղաքյանը գորակոչվում է խորհրդային բանակ, ծառայում ինժեներական զորքերում, այնուհետև, 1941 թ. մասնակցում Հայրենական մեծ պատերազմի ծանր մարտերին Ուկրաինայի ռազմաճակատում: Ցուցաբերած արիության համար պարգևատրվում է «Կարմիր Աստղ» մարտական շքանշանով: 1942 թ., ծանր վիրավորվելուց հետո, զորացրվում է:

Վերադառնալով ռազմաճակատից, Հ. Մաղաքյանը տեղափոխվում է Երևան և աշխատանքի ընդունվում երկրաբանական գիտությունների ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Այնուհետև, մինչև իր կյանքի վերջը, Հ. Մաղաքյանի շուրջ 40 տարիների գիտական, ստեղծագործական, մանկավարժական և գիտա-

կազմակերպչական գործունեությունը կապված է եղել ՀՀ ԳԱ և երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ: Այդ տարիներին նա վարել է օգտակար հանածոների բաժնի վարիչի, ինստիտուտի գիտության գծով փոխտնօրենի, իսկ 1963-1966 թթ.՝ տնօրենի պաշտոնները:

1948 թ. Հ. Մաղաքյանը Լենինգրադի լեռնային ինստիտուտում փայլուն կերպով պաշտպանում է «Հայաստանի մետաղածնությունը» դոկտորական ատենախոսությունը և նույն տարում, 34 տարեկան հասակում, ընտրվում Հայաստանի ԳԱ ակադեմիկոս:

Հ. Մաղաքյանի բեղուն ու բազմաթիվաճանգ, ցավոք՝ շատ կարճատև կյանքը (նա վախճանվեց 1982 թ., 68 տարեկան հասակում) հանգամանքների բերումով եղել է հարուստ ամենատարբեր և անկանխատեսելի իրադրություններով և հետաքրքիր հանդիպումներով:

Իր կյանքի անցած ուղին նա, իր խառնվածքին բնորոշ հետաքրքիր և սրամիտ լեզվով, ներկայացրել է «Записки геолога» գրքում, որը, ցավոք, լույս տեսավ միայն նրա մահից հետո՝ 2007 թ.:

Հ. Մաղաքյանն իր կյանքի շուրջ 40 տարիներն անձնվիրաբար նվիրաբերել է Հայաստանի երկրաբանական գիտության զարգացման և այն միջազգային մակարդակի բարձրացնելու գործին: Վստահորեն կարելի է փաստել, որ նա երկրաբանության ասպարեզում

լորտները և բարձրացնում հանքանյութի արժեքը: Հ. Մաղաքյանի աշխատություններին ընդհանրապես բնորոշ են մտքի հստակ շարադրումը և շեշտադրումը, ընդհանրացումների լայն շրջանակը և նպատակաուղղվածությունը դեպի պրակտիկ ոլորտ:

Լայնածավալ գիտահետազոտական գործունեության հետ մեկտեղ Հ. Մաղաքյանը մեծ ուշադրություն էր դարձնում երիտասարդ կադրերի պատրաստման հարցերին: Նա երկար տարիներ դասավանդել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում և Լենինգրադի լեռնային ինստիտուտում: Հատուկ հարկ է նշել նրա փայլուն դասախոսական ծիրը, նյութի հստակ շարադրումը, ինչը մեծապես նպաստում էր ուսանողների մոտ հետաքրքրություն և սեր առաջացնելուն հանդեպ մետաղական հանքավայրերի երկրաբանություն առարկան:

Հ. Մաղաքյանը մոտ 150 գիտական հոդվածների, 12 մենագրությունների և բուհական դասագրքերի հեղինակ է, որոնք վերաբերում են մետաղածնության, մետաղական հանքավայրերի առաջացման տարբեր հարցերին: Նրա գիտական աշխատությունները լայն ճանաչում են ստացել միջազգային երկրաբանական հանրության կողմից և նրան արժանի համբավ բերել Հայաստանում, նախկին ԽՍՀՄ-ում և արտասահմանում: Շատ մենագրություններ թարգմանվել են անգլերեն, ֆրանսերեն, չինարեն և մի շարք երկրներում ընդունվել որպես բուհական դասագրքեր:

Հ. Մաղաքյանը հատուկ ուշադրություն էր դարձնում ուսանողների համար հայալեզու ձեռնարկների ստեղծմանը, մասնավորապես հրատարակել է «Մետաղական հանքավայրեր» (1958 թ.), «Միներալոգիա» (1972 թ.), «Մետաղածնություն» (1978 թ.) և «Օգտակար հանածոների առաջացման պայմանները» (1981 թ.) դասագրքերը, որոնք կիրառության մեջ են մինչ այսօր:

Նա բազմիցս դասախոսություններով և զեկուցումներով հանդես է եկել տարբեր երկրներում և ներկայացրել Հայաստանի երկրաբանական գիտության նվաճումները:

Հ. Մաղաքյանի բազմակողմանի գիտական, մանկավարժական, գիտակազմակերպչական և հասարակական գործունեությունն արժանացել է ԽՍՀՄ և Հայաստանի պետական մրցանակների. նա պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշ», «Պատվո նշան» և այլ շքանշաններով:

Հարկ է նշել, որ Հ. Մաղաքյանը ոչ միայն փայլուն գիտնական էր, դասախոս ու լայն առումով գիտության գործիչ, այլ ընդհանրապես բազմակողմանի զարգացած և արտակարգ բարեկիրթ անձնավորություն էր: Նրան

նոր մետաղածնություն ուղղության հիմնադիրներից մեկն էր և Հայաստանում այդ գիտական ուղղության դպրոցի ստեղծողը: Ուղղություն, որը թույլ տվեց խմբավորել ու դասակարգել տարբեր տիպի և բաղադրության մետաղական օգտակար հանածոների կուտակումները և հանքավայրերը, որոնք առաջացել են երկրակեղևի ձևավորման պատմության որոշակի ժամանակահատվածներում ընթացող տարբեր երկրադինամիկական իրադրություններում: Մետաղածնության բնագավառում գիտականորեն հիմնավորված մեծածավալ նյութերի ընդհանրացումը թույլ տվեց Հ. Մաղաքյանին առաջին անգամ Հայաստանի ու նախկին ԽՍՀՄ սահմաններում առանձնացնել տարբեր տիպերի հանքային պրովինցիաներ և տալ 48 հանքային ֆորմացիաների բնութագրերը, ինչպես նաև դրանց առաջացման օրինաչափությունները և առանձնահատկությունները: Այդ աշխատանքները, բացի լուրջ գիտական արժեքից, ունեցան նաև մեծ կիրառական նշանակություն երկրի ընդերքի հանքահումքային պաշարների երկրաբանական որոնողահետախույզական աշխատանքների գիտականորեն հիմնավորված կազմակերպման և հետազոտում՝ դրանց արդյունավետ յուրացման գործում:

1957 թ.-ից մինչև կյանքի վերջը Հ. Մաղաքյանը անընդմեջ վարել է Հայաստանի ԳԱ տեխնիկական, ապա՝ Գիտություններ երկրի մասին բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը, միաժամանակ լինելով Համամիութենական միներալաբանական ընկերության Հայկական բաժանմունքի մշտական նախագահը:

Հ. Մաղաքյանի ամմիջական մասնակցությամբ և ղեկավարությամբ Հայաստանում ծավալվեցին համակարգված հետազոտություններ՝ նվիրված հանրապետության և հարակից տարածքների մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի և կուտակումների առաջացման ու տեղաբաշխման օրինաչափությունների բացահայտման ու դասակարգման հարցերին: Դրա հետ մեկտեղ Հ. Մաղաքյանը լրջորեն զբաղվել է նաև մետաղական օգտակար հանածոների երկրաքիմիայի, միներալաբանության, միներալոգիայի, ինչպես նաև հանքանյութերում ազնիվ և հազվագյուտ տարրերի ուսումնասիրման հարցերով: Այդ հետազոտությունների շնորհիվ Հայաստանի հայտնի պղինձ-մոլիբդենային, պղինձ-հրաքարային, ոսկի-բազմամետաղային, ոսկեբեր և այլ մետաղական ֆորմացիաների հանքավայրերը ստորաբաժանվեցին ըստ նրանցում հազվագյուտ և ազնիվ տարրերի պարունակությունների, ինչը զգալիորեն ընդլայնում է նրանց յուրացման ո-



բնորոշ էին մեծ աշխատասիրությունը, սուր և արագ մտածողությունը, իր հանդեպ խստապահանջությունն ու միաժամանակ երիտասարդ մասնագետների ու զործընկերների հանդեպ հարգալից և ուշադիր վերաբերմունքը:

Հ. Մաղաքյանը եղել և մնում է մետաղածնության տեսության, ինչպես նաև տարբեր տիպի մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի առաջացման, տեղաբաշխման և դասակարգման օրինաչափությունների ուսմունքի ստեղծման և զարգացման առաջնեկներից մեկը, մեծ ճանաչում ու հեղինակություն վայելող գիտնական: Ակադեմիկոս Հ. Մաղաքյանի մահվանից անցել է շուրջ 32 տարի, սակայն նրա հարուստ գիտական ժառանգությունը չի կորցրել արդիականությունը և գիտական արժեքը:

Նրա կերպարում ներդաշնակորեն ամբողջացած էին Հայաստանի արժանավոր քաղաքացու, փայլուն գիտնականի և դասախոսի, բարեկիրթ, բազմակողմանի զարգացած և արտակարգ համակրելի, համեստ անձնավորության, միաժամանակ ընտանիքի հանդեպ շատ ջերմ և ուշադիր հոր ու ամուսնու հատկանիշները:

ՀՀ ԳԱԱ Քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունք



ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱՍ
սփյուռքի բաժինը

Բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ Անահիտ Տոնապետյանը ծնվել է 1962թ. ապրիլի 18-ին Ֆրանսիայի Լիոն քաղաքում: Նրա կրթության, դաստիարակության և հոգեկերտվածքի վրա անջնջելի հետք են թողել պապիկն ու տատիկը: Խարբերոցի պապիկին՝ Տոնապետ Տոնապետյանին, Անահիտը համարում է իր հայկական արժեհամակարգի հիմնական սյունը: Տոնապետը 1913 թ. մեկնել էր Միացյալ Նահանգներ, և ճակատագրի կամոք, ամբողջ ընտանիքից, որը բաղկացած էր 12 անդամից, միայն ինքն էր փրկվել եղեռնից: Լսելով Ցեղասպանության մասին, Տոնապետը անդամագրվում է Ֆրանսիայի Արևելյան լեգեոնին, քանի որ այդ ժամանակ Ֆրանսիան ծրագրում էր ազատագրել Կիլիկիան և այդ նպատակով հավաքագրում



գիրն է, միաժամանակ խմբագրել է 5 գիտական աշխատություն:

Անահիտ Տոնապետյանը միշտ համագործակցել է ՀՀ ԳԱՍ կառույցների և հատկապես Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ: Այդ համագործակցության շրջանակներում 1999թ. Փարիզում նա կազմակերպեց հայոց լեզվին նվիրված միջազգային կոնֆերանս, որին Հայաստանից մասնակցում էին ավելի քան 20 մասնագետ, իսկ 2001թ. Ստեփանակերտում՝ իրականացրեց «Հայերենի առաջին բարբառագիտության» միջազգային գիտաժողովը, որին արտերկրներից մասնակցում էին 22 գիտնական:

Անահիտ Տոնապետյանը շարունակում է սերտորեն համագործակցել ՀՀ ԳԱՍ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ: Նրանք դիմել են ՀՀ գիտաբանական և Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնին՝ դրամաշնորհ ստանալու և իրականացնելու գիտական համատեղ աշխատանք: Նպատակն է դաշտային աշխատանք իրականացնել Հայաստանի շրջաններում բնակվող ներգաղթած հայության բարբառների, ինչպես նաև նրանց ինքնության վերաբերյալ: Օրերս մասնակցելով ՀՀ ԳԱՍ ընդհանուր ժողովին, Անահիտ Տոնապետյանը զուգահեռ դասախոսություն կարդաց նաև հնագիտության և ազգագրության ինստիտուտում:

Հաշվի առնելով Անահիտ Տոնապետյանի գիտական, մանկավարժական և Հայաստանի գիտական կառույցների հետ սերտ համագործակցության բարձր արդյունավետությունը 2011 թ. ՀՀ ԳԱՍ-ն նրան ընտրեց արտասահմանյան անդամ: Իսկ 2014թ. ապրիլին, մինչև Տոնապետյանը մասնակցում էր ՀՀ ԳԱՍ ընդհանուր ժողովին, Ֆրանսիայի Հանրապետությունը իր դեկրետով նրան՝ Ֆրանսիայի Հանրապետության գիտության և կրթության ոլորտին մատուցած ծառայությունների համար շնորհեց Պատվավոր Լեգեոնի շքանշան: Այդ կապակցությամբ ՀՀ ԳԱՍ ղեկավարությունը շնորհավորում է անվանի գիտնականին և մաղթում նորահոր հաջողություններ:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
պ.գ.թ. դոցենտ, ՀՀ ԳԱՍ
սփյուռքի բաժնի
գիտքարտուղար

Անահիտ ՏՈՆԱՊԵՏՅԱՆ

է հայագի կամավորականների: Պապիկը նորից հնարավորություն ունեցավ մտնել «երկիր», որտեղ ամուսնացավ և 1922 թ. ընտանիքով գաղթեց Ֆրանսիա: Անահիտ Տոնապետյանի ծնողները՝ Ավետիսը և Շաքեն, ծնված լինելով Ֆրանսիայում, ցանկացել էին ստեղծվել մի հայ ընտանիք՝ իրենց չորս երեխաներին փոխանցելով հայկական արժեքներն ու լեզուն, ինչպես նաև սերը ուսման նկատմամբ:

Լիոնում հայկական դպրոց չլինելու պատճառով Անահիտը հաճախեց պետական դպրոց՝ միևնույն ժամանակ բաց չթողնելով հինգզարթի օրերին Լիոնի հայկական առաքելական եկեղեցուն կից շաբաթական մեկօրյա հայկական դպրոցի դասընթացները այստեղ նա սովորում էր հայոց լեզու, գրականություն, պատմություն, պար, երգ:

1979 թվականին ավարտելով Ֆրանսիական միջնակարգ դպրոցը Անահիտը շարունակեց կրթությունը հունանիտար բարձրագույն դպրոցների նախապատրաստական դասընթացներում: Որպես գերակա ուղղություն նա նախընտրեց ռուսերենը: Անահիտը ընդհանրապես սիրում էր լեզուների ուսումնասիրութ-

յունը, և գիտական ուղղությունը կարծես թե կանխորոշված էր: Այստեղ սովորելը հնարավորություն տվեց Տոնապետյանին ստանալ գերազանցության կրթաթոշակ և 1982թ. նա արդեն ընդունվեց Սորբոնի համալսարան: Ուսման տարիներին նա վերապատրաստման դասընթացների մեկնեց ԽՍՀՄ՝ Մոսկվայի պետական համալսարանում կատարելագործելու իր ռուսերենը:

Վերադառնալով Ֆրանսիա Անահիտը մասնակցեց ամենահեղինակավոր համարվող «Ազրեզայուն» կոչվող մրցույթին և դարձավ բարձր աստիճանի ուսուցիչ: Սկզբում դպրոցում դասավանդեց, այնուհետև տեղափոխվեց Սորբոն:

1991թ. Անահիտ Տոնապետյանը Ֆրանսիայի խոշոր լեզվաբաններից մեկի՝ Կլոդ Աժեժի ղեկավարությամբ, մեծ հաջողությամբ պաշտպանեց «Հողի գործածածությունը արևմտահայերենում» դոկտորական ատենախոսությունը՝ առաջին անգամ իրականացնելով արևմտահայերենի լեզվաբանական էլեկտրոնային կորպուսը: Նույն տարի էլ աշխատանքի ընդունվեց Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների հա-

մալսարանի հայագիտության ամբիոն, որտեղ մինչև այժմ էլ դասավանդում է՝ պրոֆեսորի հաստիքով: Միևնույն ժամանակ նա երկար տարիներ ընդհանուր լեզվաբանության լաբորատորիայի տնօրենն է:

Այսօր Անահիտ Տոնապետյանը դասավանդում է նաև Լիբանանի Ամերիկյան համալսարանում և դաշտային աշխատանք իրականացնում Բեյրութում: Նրա հիմնական նպատակն է ուսումնասիրել արևմտահայերենի զարգացումները և արդի վիճակը: Նրա ղեկավարությամբ մեկ ասպիրանտ, ով ամերիկոսի է, իրականացնում է գիտական աշխատանք, որը նվիրված է «Միջին Արևելքում արևմտահայերենի կացությունը վտանգված լեզուների շարքում» թեմային: Վերջինս նույնպես իրականացնում է դաշտային աշխատանք և գտնվում է Բեյրութում: Իր հետազոտությունների մեջ Անահիտ Տոնապետյանը այսօր նաև խորացնում է աշխարհագրա-լեզվաբանական նորարարական մեթոդները, որ համադրում են բարբառագիտության և արևելյան լեզվաբանության հարցադրումները՝ աշխարհագրական տեղեկատվական համակարգի օժանդակությամբ:

Անահիտ Տոնապետյանը անցած տարիների ընթացքում հրատարակել է ավելի քան 30 գիտական հոդված. նա Շվեյցարիայում տպագրվող «Լեզվական փաստեր» (Faits de Langues) միջազգային գիտական ամսագրի գլխավոր խմբա-

Սերուն կատեղծվի Հայոց ցեղասպանության թանգարան- հուշահամալիր

«Սեր-2015» ընկերակցությունը Ֆրանսիայից մեկ տեղեկացնում է, որ Փարիզից ոչ հեռու գտնվող Սեր քաղաքում՝ Սամվել Մուրադ վարժարանի տարածքում ստեղծվելու է Հայոց ցեղասպանության թանգարան-հուշահամալիր: 2014 թ. փետրվարի 27-ին հուշարձանի ճարտարապետական նախագծի մրցույթի ժյուրին ամփոփել է անցկացված մրցույթի արդյունքները: Առաջին մրցանակը շնորհվել է Հյուգո Մաֆրիի և Օրտանս Գուպիի նախագծին: Երկրորդ մրցանակին արժանացել է Ֆիլիպպո Պազինիի, Մաթիաս Ռոլոյի, Ֆլորիան Գերանի և Ռոզալի Պերիկոյի նախագիծը:

Ընդհանուր առմամբ մրցույթին, առանց հեղինակների անունները նշելու, ներկայացվել էր ֆրանսիացի, իտալացի և հայ երիտասարդ ճարտարապետների 24 նախագիծ: «Սեր-2015» ընկերակցության նախնական ընտրությունից հետո մնացել էր 11 նախագիծ: Մրցանակային գումարը կազմում է 5 հազար եվրո: 2000-3000 քառ. մետր մակերեսով համալիրը պետք

է կառուցվի՝ պահպանելով 18-րդ դարի 2-րդ կեսի շինությունը, որի ճակատները, տանիքը, նախասրահը, շքասանդուղքը, պատվո սրահը և փոքր սրահը գրանցված են Ֆրանսիայի պատմական հուշարձանների ցանկում: Թանգարան-հուշամալիրը կկառուցվի, այսպես կոչված, մշակույթի հովտում՝ այն պալատի մոտակայքում, որտեղ 1920 թ. ստորագրվեց Սերի պայմանագիրը: Հուշահամալիրում կլինեն պատմության թանգարան, աղբյուրագիտական կենտրոն, հանդիսարան: Թանգարան-հուշահամալիրը բաց կլինի ինչպես լայն հասարակայության, այնպես էլ գիտաշխատողների և կրթական հաստատությունների համար:

Ճարտարապետական նախագծերի մրցույթի կազմում ընդգրկված էին «Նոտր Դամ» հաստատության նախկին փոխնախագահ ժան Միշել Կորոյունեն, փիլիսոփայության դասախոս ժան Կլոդ ժանսը, պատմա-



բաններ Ռեմոն Գևորգյանը, Քլեր Մուրադյանը, Իվ Թեռնոնը, «Սեր-2015» նախագծի գիտխորհրդի պատասխանատու Լորան Լեյլեքյանը, բանասեր, պատմաբան, հայագետ ժան Պիեռ Մահեն, «Սեր-2015» ընկերակցության նախագահ Ժերար Գերգերյանը, հայր Հարություն Պզտիկյանը և այլ հանրահայտ անձինք:

Լայնորեն հայտնի է ուսանական բանաստեղծ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ և հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկու (1884-1967) անսահման նվիրվածությունը Հայաստանին, հայ ժողովրդին ու նրա մշակույթին: Դրա խոսուն վկայություններից մեկը 1919 թ. ապրիլի վերջերին Երևան կատարած նրա այցելության հետ կապված մանրամասներն են: Հայաստանի Հանրապետության հռչակումից համարյա մեկ տարի անց, հայ ժողովրդի համար ծանր օրերին, երբ երկիրը լի էր անօթևան գաղթականությամբ, երբ մոլեգնում էին քաղցն ու համաճարակը՝ ամեն օր խլելով հարյուրավոր զոհեր, Ս. Գորոդեցկին Երևան է գալիս «Վանի սովերները» և «Ժամանակակից հայ քնարերգությունը» վերնագրերով դասախոսությամբ, ժողովրդի հոգսերն ու դառնությունները կիսելու պատրաստակամությամբ, Երևանում համախմբվող նրա մտավորական զավակների հետ շփվելու, ժողովրդի ու պետության կացությունը սեփական աչքերով տեսնելու մտադրությամբ: Իր ուղևորությունը Թիֆլիսից սկսած՝ Գորոդեցկին մանրամասն արձանագրել և «Ճանապարհորդություն դեպի Երիվան» ընդհանուր խորագրով հրապարակել է «Կավկասյան սյուրի» ռուսալեզու թերթում: Ստորև ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Հայաստանի, մասնավորապես Երևանի՝ Ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի համար անչափ բնութագրական, այդ շարքի 2-րդ՝ մեր թարգմանությամբ, առաջին անգամ ամբողջական տպագրվող ակնարկը՝ «Վերակենդանացող քաղաքը» վերնագրով: Դրա հրապարակումը խորհրդանշական է Հայաստանի առաջին Հանրապետության տարեկիցի առումով, նաև հարգանքի տուրք է Ս. Գորոդեցկու հիշատակին՝ ծննդյան 130-ամյակի առթիվ:

Անուշավան ԶԱՔԱՐՅԱՆ

«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ, բանասիրական գիտությունների դոկտոր



«պալատականություն», ամեն ինչ համեստ է ու խելամիտ: Նաև բոլորի հոգում հենց նոր ապրած ծանր սև օրն է: Եվ այն ընդմիջտ վերացնելու համար Հայաստանի մայրաքաղաքը լարում է ողջ ուժերը:

Ես այդ գործնական տոնը շատ զգացի՝ մտնելով խորհրդարանի շենք: Հարմարավետ, համեստ ակունքի դահլիճ, փոքրիկ օթյակներ կառավարության անդամների համար, բեմի վրա նախագահության համար բարձրություն և երկու մեծ դրոշ: Բայց երբ այդ համեստ կահավորության մեջ սկսվում է նիստը, ելույթները, կուսակցությունների պայ-

բուր դժվարությունները կհաղթահարվեն:

Դրանք քիչ չեն:

Հայաստանի Հանրապետությունը չի ստացել այնպիսի ճոխ ժառանգություն, ինչպես իր հարևան Վրաստանը: Եթե թիֆլիսյան վարչական ապարատը, որը արքայական թափով տարածվել էր ողջ ծայրագավառի վրա, հնարավոր բոլոր հարմարություններն ու հնարավորություններն էր ընծեռում դրանից վրացական պետական ապարատը տնտեսելու համար, ապա չէ որ Երիվանում բացարձակապես ոչինչ չկար: Ամեն ինչ պետք

նալ ազգայնամոլության կարմրուկով, ինչից հիմա ապաքինվում է Վրաստանը, բայց այդ հիվանդությունը չի կարող խորապես վնասել Հայաստանի օրգանիզմը նույնիսկ դրան նպաստող կողմնակի հանգամանքների առկայության դեպքում: Դրա հետ միասին խնամքով պահպանվում են և ազգային բոլոր բջիջները, որոնք կարող են դառնալ պետական շինարարության գործոններ: Նկատի առնելով այս ամենը՝ Երիվանում կատարվող աշխատանքներում կարելի է լավ տվյալներ արձանագրել և նույնպիսի արդյունքներ կանխագուշակել:

Համապատասխան պայմանների բացակայությամբ պետական մեխանիզմները կարգավորելու դեպքում այդ առաջին ծանր առաջադրանքի կողքին կանգնած է երկրորդը՝ էլ ավելի դժվարը:

Հայաստանի Հանրապետությունն ստեղծվում է նրա բնակչության բացառիկ վիճակում գտնվելու պայմաններում:

Նրա բնակչությունը, ինչպես հայտնի է, գտնվում է փախստականի վիճակում: Այն ճնշող մեծամասնությամբ կտրված է իր բնակության վայրից և մշտական աշխատանքից:

Եվ կարելի է ասել, որ փախստականների հարցը կլանում է ողջ կառավարության ուշադրությունը առանց գերատեսչությունների ու նախարարությունների խտրության: Տեղավորել, կերակրել, բնակչությանը տնտեսական կյանքին վերադարձնել, ապաստարանների հագարավոր որբերին կերակրել ու կրթել, կրճատել մահացությունը և հիվանդացությունը՝ այդ ամենի համար հսկայական ուժեր, միջոցներ ու էներգիա է հարկավոր: Ոչ վաղ անցյալում այդ հարցը դրված էր անելանելի սուր: Վերջին ժամանակներս գործը կարծես թե սկսում է կարգավորվել: Կարսի մարզի միացումը Երիվանը բեռնաթափելու հնարավորություն տվեց: Հիմա Արփաչայի վրա կարելի է տեսնել ամբողջ գյուղերով գետն անցնող, տուն վերադարձող ժողովրդի պատկերը: Եվ եթե տեղերում, ինչպես խոստացել են, բնակչությանը մատակարարեն Կարսում կուտակված հացով, ապա դրությունն զգալի կթեթևանա:

Երիվանում էլ փախստականները դեռ շատ են, բայց ոչ առաջվա նման: Եթե կարելի է դեռ շուկայի շուրջը տեսնել առվից, այնտեղ լվացված կանաչիների կտորներ որսացող կանանց ու երեխաների, ապա կարելի է նաև այլ պատկերներ նկատել. բաշխիչ կետի առջևի հերթից հացը ձեռքին դուրս եկող փախստականների շարանը: Իհարկե, այդ օգնությունը հարկավոր է ուժեղացնել, տարածել նաև զավառների վրա, բայց այդտեղ արդեն կառավարությունն անգոր է, նա ինքն է օգնության սպասում:

Հարկ է, որ ամերիկացիներն ու անգլիացիները դա անեին արագորեն: Ինչ էլ չլինի, Երիվանում հիմա հուսահատական տրամադրություն չկա, ընդհակառակը, դրությունը բարելավող որոշ հեռանկարներ են ի հայտ եկել:

Կառավարական աշխատանքին զուգահեռ զարգանում է հասարակական և քաղաքային կյանքը: Եռում է կուսակցական պայքարը, լույս են տեսնում թերթեր, ստեղծվում է գրական-գեղարվեստական խմբակ: Երիվանցին հաստատապես անհանգստացած է և փոխում է իր սովորությունները: Առաջ նա ապրում էր իր այգիներում, իր հարմարավետ, համարյա միշտ պատուհաններին վանդակներով հին տներում: Այժմ այդ կավածատիրական կենցաղը ներխուժել են նոր ծայրեր: Կյանքը դարձել է անհանգիստ ու դժվար, բայց և հարուստ, հետաքրքիր, բովանդակալից: Քաղաքական հարցերը զբաղեցնում են բոլորին, նորությունները տարածվում են ինչպես ռադիոյով: Այդ իմաստով Երիվանն անձանաչելի է:

ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՑԿԻ.

«ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՂ ԲԱՂԱՔԸ»

Հայերն իրենց համար գեղեցիկ դրոշ են վերցրել. նարնջագույնը, կապույտ և կարմիր գույները թարմության ու պայծառության տպավորություն են թողնում, և երբ, ավտոմեքենա նստելով, նրա վրա առաջին անգամ ես տեսա այդ դրոշը, այն ինձ թվաց ծիածանի մի կտոր: Վառ, փոքր չափերով, մեծ պաստառի վրա՝ խորհրդարանում այն հանդիսավոր ու շքեղ տեսք ունի, որը հիշեցնում է գեղջկուհիների տոնական զգեստները:

Ոչ առանց հետաքրքրասիրության ես անցնում էի Աստաֆյանով:

Ռուսական ծայրամասի նահանգական քաղաքը վերածվել էր պետության մայրաքաղաքի՝ դեպի երկու ծով ելքով: Հետամնաց գավառական կյանքը փոխվել էր շինարարության տենդով: Չէ որ եթե այնտեղ՝ Փարիզում, ձևում են Հայաստանի քարտեզը, ապա այստեղ՝ Երիվանում, կատարվում են նրա ինքնուրույն կյանքի առաջին քայլերը: Այնտեղ՝ մտահոգումներ, այստեղ՝ իրագործում, այնտեղ՝ գաղափարներ, այստեղ՝ իրականություն: Ինչպես է այդ ամենն անդրադարձել քաղաքի վրա: Թեկուզև առևտրական, բայց իդիլիական-ծույլ:

Բացի այդ, հիշվում էին այն բոլոր սարսափները, որ պատմել էին Երիվանի, սովից մահացող մարդկանց, անելանելի դրության մասին:

Այդ ամենն ստուգելու, կյանքը սեփական աչքերով տեսնելու ցանկություն կար:

Եվ այն, ինչ ես տեսա, կարելի է արտահայտել երկու խոսքով. Երիվանը վերակենդանանում է:

Արտաքինից այն քիչ է փոխվել. նույն փողոցներն ու խանութներն են, նույն թրև եկող ամբոխը, բայց շարժման ռիթմն է ուրիշ, ավելի գործնական, շատ նոր դեմքեր, Երիվանում նախկինում չտեսնված մարդկանց նոր տիպ: Ամենուր ընթանում է ամենօրյա, մեղմաջան, համառ աշխատանք: Պետական շինարարության բուտաֆորիա ամենևին տեսանելի չէ: Ոչ մի ցուցադրանք, ոչ մի

քարը, դահլիճը կերպարանափոխվում է: Այդ նույն դահլիճում տեղի էին ունենում մեր համերգներն ու դասախոսությունները, և դրանում առանձնահատուկ մտերմություն կար: Խորհրդարանի քվեստորը խաղում էր ներկայացման մեջ, վարչապետը կառավարությունում աշխատում էր իբրև գրական-գեղարվեստական խմբակի նախագահ, և

էր ստեղծել տեղում, նորից, և այստեղ Երիվանյան կառավարության առջև կար երկու ճանապարհ:

Կարելի էր գծել պետական մեխանիզմի վիթխարի պլաններ և փորձել փախստականների երկրին փարթամ պետականության հանդերձանք հագցնել, որը վայել է Մեծ Հայաստանին, ինչպես այն գծագրվում է վերսալյան մա-



խորհրդարանի նախագահի ներկայությամբ քննարկվում էին թատերական հարցեր: Դա դետալ է, բայց շատ հատկանշական: Երիվանյան նախարարները գահերին չեն նստում: Նրանք հասանելի են բնակչությանը, նրանք նույնպիսի աշխատավորներ են, ինչպես բոլորը: Եվ նախարարություններում, որոնք տեղակայված են հիմնականում գիմնագիայի շենքերում, երևում է իսկական ժողովրդավարությունը:

Չէ որ նոր երկրի առաջին նախարարների համար այնքան հեշտ էր վարակվել բյուրոկրատական ամբարտապանությամբ, ձեռք բերել բյուրոկրատական բարբեր:

Երիվանը բարեհաջող խույս է տվել դրանից, նա աշխատանքի է անցել առանց կեցվածք ընդունելու և քրտնաջան կատարում է իր դժվար աշխատանքը: Եվ այդ պատճառով էլ հույս կա, որ

խագծում:

Բայց կարելի էր պետական գործը սկսել մանր բջիջներից՝ անհետաձգելի հրատապ խնդիրներից, սևագործ աշխատանքներից:

Եվ հայերի գործնական միտքը նրանց հուշեց երկրորդ ուղու վրա կանգնելու ճիշտ որոշումը:

Նախարարություններն այժմ գտնվում են կազմակերպչական շրջանում: Բաշխվում են աշխատանքները, սահմանազատվում՝ պարտականությունները: Եվ հարկավոր է նշել հայերի խնամքով վերաբերմունքն իրենց տարածքում Ռուսաստանի թողած ժառանգության հանդեպ: Ռուսական մշակույթի հետ կապը նրանք չեն խզել, և ազգային վերածնունդը հակադրության մեջ չի դրվել ռուսական ավանդույթներին: Եվ չնայած առկա են որոշ նշաններ, որ Հայաստանը նույնպես կարող է հիվանդա-

Երկրորդ համաշխարհային պատերազմում, նրա ամենաողբերգահերոսական փուլում Խորհրդային Միությանը, եվրոպաբնակ հայությանը, ասել է թե՛ Հայրենական մեծ պատերազմում Հայաստանին ոչ միայն բարոյապես հնարավորինս օգնելու հարցում, տեղին ենք համարում անդրադարձը համբավվոր մեր հայրենակցին՝ կարդինալ Գրիգոր Պետրոս Աղաջանյանին:



քարի և հաղթանակի խորհրդանիշ Մուսա լեռով, որի 240000 բնակչության 18% (43000) հայեր էին: Հուշագիրները վկայում են, որ զավառի Քեսաբ հայկական մեծ բնակավայրը իր շրջակա հայահոծ գյուղերով թուրքերին չհանձնելու խնդրանքով Աղաջանյանի մոտ եկած պատվիրակությունը դատարկաձեռն չվերադարձավ: Բավական էր պատրիարքի մեկ հեռախոսազանգ Ֆրանսիայի վարչապետին, որ պահանջը հարգվի և այդ բնակավայրն իր շրջանով մնա Սիրիայի կազմում:

Միջանկյալ անդրադարձ: Վերջին հարյուրամյակում Քեսաբը հայտնի է բնակչության կոտորածի ու տեղահանման դժոխսային իրադարձություններով: Առաջին ծանր պատուհասը շրջանի համար 1909 թվականի ապրիլն էր, երբ թուրքական զինված ջոկատները ներխուժեցին Քեսաբ: Հայերն ապաստանեցին Գարատուրանի լեռներում և ծովեզերքում: Քեսաբը թալանելուց և հրկիզե-

վեց՝ կաթոլիկ եկեղեցու հովվապետի պաշտոնում՝ մամուլի և փորձագետների կարծիքով ամենահավանական թեկնածու: Այս անգամ արդեն Աղաջանյանը պապական գահաթոռի ֆավորիտ դարձավ հենց իր... «ռուսական» ծագման շնորհիվ. այդ ժամանակ Վատիկանի և Կրեմլի հարաբերություններում լարվածության թուլացման որոշակի դրական տեղաշարժ էր կատարվել: Դրա բարձրակետը եղավ Ն. Խրուշչևի դստեր՝ Ռադայի և նրա ամուսնու՝ ոչ անհայտ Ալեքսեյ Ալեքսեյի այցը Խորհրդային Միության հետ դիվանագիտական հարաբերություններ չունեցող Վատիկան, ընդունելությունը ամենամեծ կայանալի դեմքի՝ Աղաջանյանի կողմից (առանց թարքմանչի անկաշկանդ երկխոսությունը):

Այս տեսապատկերի վրա Վատիկանի ոչ քիչ թվով բարձրաստիճան պաշտոնյաներ գտնում էին, որ մասն մարդը, ինչպիսին «արևելաեվրոպական արմատներով և ըստ էության աստվածաշնչյան

նորեն վառ ու եվրոպական ձևերով»:

Երբ արդեն պատրաստ էր նորընտիր պանտիֆիկի գահակալության արարողությունը, դեպքերն այլ ընթացք ստացան. իրադարձություններին խառնվեց ամերիկյան հետախուզությունը, գործի մեջ ներքաշելով իտալական հատուկ ծառայություններին: Հզորացող սոցիալիստական ճամբարի հետ երկխոսության ջատագովներին հակառակ՝ առաջին պահ անվիճելի թեկնածուի հարցը քաղաքականացվեց, Իտալիայի կառավարող շրջանակներում բորբոքվեց ոչ իտալացի Պապ ունենալու նպատակահարմարության, «ազգային խանդի» զգացումը, աշխուժացան վատիկանյան հակախորհրդային ուժերն ու թեկնածուի անձնական հակառակորդները: Բանակոթիվ թեժացավ և տարածվեց: Մամուլում շրջանառու դարձավ այն միտքը, թե Աղաջանյանի հայկական ծագումը «չափից ավելի ծանր նախածին մեղք է» և որ պետք է վախենալ կոմունիստների հետ նրա «վտանգավոր» կապերից, և որ առավել վատ է՝ Վատիկանի վրա «աթեիստ կոմունիստների» ազդեցությունից:

Աղաջանյանի վրա ստվեր զգելու նպատակով գործի դրվեցին հին ու փորձված մեթոդները. մամուլի միջոցով տարածվեցին նրան անվանարկող հրապարակումներ: Իհարկե, դժվար էր բարձրակիր ու նախանձահարույց ինտելեկտի տեր, ասկետիկ կյանքով ապրող, ազնվական կեցվածքով ու ներկայանալի, հավատին անմնացորդ մվիրված այդ գործչի վերաբերյալ ճշմարտանման, վարկաբեկող նյութ գտնելը: Հորինված վարկածներին մեկն էլ կապված էր կարդինալ եղբորը երեմն այցի եկող երևանաբնակ ավագ քրոջ՝ Ելիզավետայի հետ, որն այրին էր Պապիկով ազգանունով ռուսի:

Հարկ է ավելացնել, որ շրջանառվող վարկածները «հաստատելուն» ոչ քիչ չափով նպաստեց տեղի՝ չափից ավելի ջանացող խորհրդային ռեզիդենտուրան: Իտալական, և ոչ միայն, թերթերը, Պապի ընտրությունների նախօրեին պարբերաբար տպագրում էին քրոջ՝ Ելիզավետա Պապիկովայի և նրա հետ պարբերաբար հանդիպող խորհրդային դեսպանատան աշխատակից Գևորգյանի լուսանկարները:

Հատկապես ԱՄՆ-ի հատուկ ծառայությունները բարձրաձայնեցին, թե ֆաշիզմի ջախջախման գործում մեծ ավանդ ներդրած իրենց երկրի բարձրաստիճան զինվորականների հետ ժամանակին ինչպիսի «ոչ դիվանագիտական» լեզվով էր խոսում կարդինալ Աղաջանյանը՝ քաղցր խոսքեր չխնայելով իրենց երկրի հասցեին:

Ժամանակին Վատիկանի որոշմամբ Աղաջանյանի գլխավորած հեղինակավոր մի պատվիրակություն մեկնեց Վիետնամ: Նպատակը՝ ամերիկա-վիետնամական տևական արյունալի պատերազմին վերջ դնելու հնարավոր ելքերի որոնումն էր: Տեղի լրագրային գործակալությունները, նենգափոխելով այցելության խաղաղարար բուն նպատակը, լայնորեն՝ այդ թվում՝ Խորհրդային Միությունում և իհարկե նաև Հայաստանում, տարածեցին, թե Կարդինալը ագրեսորի դեմ անկախության համար պայքարող երկրի է ժամանել իր ներկայությամբ և աղոթքներով խրախուսելու ամերիկյան զավթիչներին: Առաքելության նպատակի մասին բացահայտ ապատեղեկատվությունը ևս այս անգամ օգտագործվեց Աղաջանյանի դեմ: Այս ամենի արդյունքում, սկանդալներից խուսափելու համար, Աղաջանյանը պապական աթոռի վարկն ու իր անձը սկանդալներից զերծ պահելուց դրդված, անգամ միամիտ հավատացյալների համար «արդարացում» հորինելով, թե ինքը քրիստոնյա փոքր ազգի ներկայացուցիչ է, որի փոքր մասն է դավանում կաթոլիկություն, հարկադրված էր հանել իր թեկնածությունը և կարդինալների միջև կայացած կոմսետուսով Հռոմի Պապ ընտրվեց Պավել II-ը:

Արմեն ՀՈՎՍԵԹՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի քաղաքագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

Հռչակավոր, սակայն ոչ այնքան հայտնի կարդինալ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ

* * *

Փաստերը վկայում են, որ ի տարբերություն կաթոլիկ եկեղեցու և վատիկանյան պետության գահին նստած երդվյալ հակակոմունիստ, Հիտլերի, Մուսոլինիի և Ֆրանկոյի հանդեպ անթաքույց համակրանք տածող Պիոս II Պապի, դավանաբանական պահպանողական ու չափավոր հայացքների տեր, վատիկանյան ազդեցիկ կարդինալ Աղաջանյանն այլ կերպ էր մտածում և գործում: Նա առանձնակի դերակատարում ունեցավ ֆաշիստական վարչակարգի զրավյալ և վերահսկողության տակ գտնվող երկրների հայկական համայնքների անվտանգության ապահովման, ֆաշիստական համակենտրոնացման ճամբարներում հայազգի ռազմագերիների վիճակը թեթևացնելու, նրանց կյանքը հնարավորինս պահպանելու գործում:

Յավոք, քիչ բան է հայտնի նաև պատերազմի ժամանակ եվրոպահայությանը, առաջին հերթին՝ հայ ռազմագերիներին օգնություն ցուցաբերելու, նաև նրանց փրկելու գործում կարդինալի գիտությամբ ու խրախուսանքով մեծ դեր կատարած համախտի՝ Վիեննայի Մխիթարյանների առաջնորդ արքեպիսկոպոս Մեսրոպ Ապոգյան Կոմսիանի կատարած հիշարժան գործունեության մասին:

* * *

Կենսագրական որոշ դրվագներ: Աղաջանյանը ծնվել է 1895 թվականին Ախալցխայում: 1917-ին հայ կաթոլիկ քահանա ձեռնադրվելուց հետո անցել է Սուրբ Ղազարի կղզի, այնուհետև տեղափոխվել Հռոմ: 1937 թ. Հայ կաթոլիկների Սինոդում նա ընտրվել է Կիլիկիո պատրիարք՝ անվանակոչվելով Գրիգոր-Պետրոս XV անունով: Այս շրջանում արդեն մեծ էր նրա հեղինակությունը: Ահա մեկ վկայություն: Հմտորեն օգտագործելով հզորների հակամարտող դաշինքների միջև ընթացող պայքարը և անցնելով անգլո-ֆրանսիական կոալիցիայի կողմը՝ ի զին դրա և ի նշան հավատարմության, 1939-ի հունիսին Ֆրանսիայի թողովությամբ Սիրիայից տարանջատվեց և Թուրքիային կցվեց Միջերկրական ծովի հյուսիսարևելյան անկյունում գտնվող Քեսաբը՝ հայկական Կիլիկիայի հայաբնակ մնացած այդ դրախտային անկյունը: Տնտեսական, ռազմավարական ենթամանդատային խնամարկյալ Ալեքսանդրետի (Իսկենդերուն) սանջակը՝ թուրքական բռնապետության դեմ հերոսական պայ-

լուց չբավարարված, թուրքերը նույնը կրկնեցին նաև Գարատուրանում: Բնակչությունը ֆրանսիական նավերով տեղափոխվեց Լաթաքիա: Մեկ տարի անց հետ վերադարձան և վերաշինեցին օրրանը: Քեսաբի բնակչությունը ևս անմասն չմանց 1915-ի Հայոց ցեղասպանության գաղթից ու աքսորից: Հազարավորները զոհվեցին, մի մասն էլ աքսորվեցին դե-



պի Դեր Ջոր և դեպի հարավ մինչև Հորդանան:

Իսկ մեր օրերի թվով երրորդ ցեղասպանությունը մեր ժողովրդին, եղեռն վերապրած նրա քեսաբյան հատվածին նետված լրջագույն մարտահրավեր է:

1941-ին Հռոմի Պապը Աղաջանյանին ձեռնադրեց կարդինալ Վատիկանում, որին հետևեց մի քանի լեզուների տիրապետող և հատկապես ոչ քրիստոնեական հավատների խորագիտակ Աղաջանյանը՝ նշանակվեց կարևորագույն՝ առաքելական կոնգրեգացիայի՝ «հավատքի տարածման» (Գաղափարական կառույցն է) պրեֆեկտ:

1958 թ. Պիոս XII Պապի մահանալուց հետո, արդեն մեծ հեղինակություն վայելող 63-ամյա կարդինալ Աղաջանյանը գահաթոռի ամենահավանական թեկնածուն էր (պապաբիլը): Սակայն, ավա՞ղ, դրանք սառը պատերազմի ամենաթեժ ժամանակներն էին, և Սուրբ Պետրոսի գահին չէր կարող հայտնվել ոչ իտալացի հոգևորական, առավել ևս՝ հայկական ծագում ունեցող՝ «Կրեմլի լեզվին տիրապետող», ու սոցիալիստական ճամբարում արյունակցական ու ազգակցական կապեր ունեցող «ռուսը»:

Դրանից հինգ տարի անց, այս անգամ արդեն կարդինալների Կոնկլավի դեկանի բարձրագույն պաշտոնը զբաղեցնող Աղաջանյանի անունը կրկին շրջանառ-

սկզբունքներ դավանող կոմունիզմի գաղափարախոսությանն ու պրակտիկային ծանոթ» լայնատարած կապեր ունեցող, լեզուների տիրապետող և Արևմուտքի կենսապահանջների քաջածանոթ, Արևելքի բնույթին ու արժեհամակարգին քաջածանոթ Աղաջանյանն է, որ կարող է օգտակար լինել Խորհրդային Միության և սոցիալիստական գաղափարներ կրող և օրավուր ստվարացող նրա դաշնակիցնե-

րի հետ երկխոսության գործում:

Թող համատեքստից խոտորում չթվա Աղաջանյանի հետ Արամ Խաչատրյանի հանդիպման դիպվածը:

«Եվրոպական բեմերում «Սպարտակ» բալետի հաղթական բեմադրությունների ժամանակ տեղի է ունենում մեծ կոմպոզիտորի հանդիպումը ազդեցիկ Կարդինալի հետ: Անթաքույց հիացմունքով այսպես է մեկնաբանում այդ հանդիպումը Արամ Իլլիչը: Ես աթեիստ եմ, սակայն քրիստոնեությունն առաջինը պաշտոնապես ընդունած ժողովրդի զավակը, ուստի չէի կարող չհանդիպել այդ համբավավոր իռզևորական հայրենակցիս: Այդ սրտաբաց ընդունելության ժամանակ, վերհիշում է նա, մեծ տպավորություն թողեց դասական երաժշտությանը, այդ թվում՝ հայ և ռուս կոմպոզիտորներին եկեղեցու այդ մեծադիր ծառայի քաջատեղակությունը: Նա գովեստի խոսքեր ասաց իմ բալետի մասին՝ մոմունենալով համարելով Սպարտակի՝ «ազատության համար պայքարող այդ մեծ ըմբոստի» կերպարը՝ այն կապելով ազատագրական երազներով ապրող մեր ժողովրդի ապագայի, նրա հոգևոր-տարածքային անկախության հետ: Իր գովեստների մեջ նա ինձ անվանեց պրոտոնացիոնալիստ, քանի որ երաժշտության մեջ ես արտահայտել եմ հայկական ազգային-ազատագրական զգացումներն այլաբա-

Տաղանդավոր Թաշճյան. դերասանը, բեմադրիչը, նկարիչը

(Սկզբը՝ N 3-ում)

Տարբեր դերերի նկատմամբ, այսպիսով, ունենալով նույն մոտեցումը, Թաշճյանը, իր իսկ խոսքերով, վերամարմնավորվում էր այնպես, որ իրեն զգում էր «ուրիշ մարդ»։ Նրա Կորրադոն, ինչպես և Կարապետ Գալֆայանի Համլետը, հասավ անձնավորման և անձնավորության կատարյալ ներդաշնակության, բեմական կերպարի և անձնավորող դերասանի բացարձակ միասնության։ Այնպես որ, Սիրանուշը, մեծ դերասանին բնորոշ նրբագագությունը, իբրև Թաշճյանի արվեստի գնահատական, նրան դիմել է իր կերպարի անունով։ «Գնա, իմ Կորրադո զավակս»։ Սրանք արտիստուհու հրաժեշտի խոսքերն են՝ նրա հյուրախաղերի վերջում (1921)։

Կորրադոն Մկրտիչ Թաշճյանի գլուխգործոցն էր։ Սակայն, նրա արտիստական հոգուն, իր իսկ խոսքով, մոտ էր նաև «հրեշավոր Յագոն»։ Եվ այդ Յագոն նա խաղաց Վահրամ Փափազյանի Օթելլոյի կողքին։ Դեր, որը Փափազյանի համար դարձավ «մի մեծ հայտնություն»։ «Յագո, որ իրերի և օրերի բերմամբ մի անծանոթ է այսօր մեր հանդիսատեսի և որը սակայն եղավ մի մեծ դերասան, հազվագյուտ մի վարպետ և իմ ունեցած բոլոր Յագոների շարքում ոչ միայն մեկը ամենաաչքառուներից, այլև ամենից ավելի «արտիստ» այդ բառի լայնագույն առումով»։ Գրում է Փափազյանը «Իմ Օթելլոն» գրքում։

Հավելենք, որ Թաշճյանի հերոսները աչքառու լինելուց բացի, նաև արդիական էին՝ կերտված դերասանական խաղի բոլորովին նոր ընկալումով։ «Խաղում էր այնպես, ինչպես այժմ են պահանջում մեզանից», ասել է Ավետ Ավետիսյանը, նրան Անանիա Գալստյանի դերում տեսնելուց հետո և ավելացրել. «Իրոք, տաղանդավոր էր Թաշճյանը»։

Տաղանդավոր էր նաև որպես կազմակերպիչ, և, եթե Իրանի հայ թատրոնը

Հովհաննես Խան-Մասեհյանի, Մեսրոպ քահանա Փափազյանի, Գասպար Իփեկյանի օրոք ընթանում էր արևելահայ բեմարվեստի ուղղությամբ, ապա Մկրտիչ Թաշճյանի շնորհիվ վերջնականապես ձևավորվեց որպես ռուսահայ թատրոնին հետևող մի նոր համակարգ արտերկրում։ «Հայ թատրոնի պատմությունը գերազանցորեն եղել է հայ կարկառուն դերասանների պատմություն»։ Գրում է «Ալիքի» հեղինակը՝ «Pectus» (Հրանտ Սրֆանձոյան) ստորագրությամբ։ Մեզ մոտ չի կիրառվել հավաքական թատրոնի սկզբունքը, որի մարմնացումն էր Մոսկվայի գեղարվեստական թատրոնը, Նեմիրովիչ-Պանչենկոյի և Ստանիսլավսկու դեկլարությամբ»։

Այսպիսով, ի տարբերություն Կոստանդնուպոլսի թատրոնի, որը պայմանաբար կարելի է ընդունել որպես դերասանի թատրոն, Իրանի հայ թատրոնը, մեծապես Մկրտիչ Թաշճյանի շնորհիվ, կազմավորվեց որպես ռեժիսորական, և այս առումով, ըստ «Ալիքի» հեղինակի, նրան կարելի է համեմատել արևելահայ թատրոնում նույն առաքելությունն ունեցած Օվի Սևունյանի և Արշակ Բուրջալյանի հետ։

Իր այս բնութագրությամբ էլ Թաշճյանը դարձավ գնահատելի նախ արևելահայ արվեստագետների համար, երբ, 1921-ին։ Երևանի մի խումբ դերասաններ հյուրախաղերով եկավ Թավրիզ։ Սփյուռքում, սովորաբար, հյուրախաղային ներկայացումները նոր լիցք են հաղորդում, խթանում են գաղթօջախների թատերական կյանքը։ Այս դեպքում, սակայն, կատարվեց հակառակը։ Մայրաքաղաքից եկած դերասանները (Մանուկ Մարության, Ստյոպա Նավասարդյան, Բաբկեն Ռաշմաճյան, Հավարշ Մակարյան), նրանց թվում՝ նաև երիտասարդ Գուրգեն Ջանիբեկյանը, Թաշճյանի խմբում անցան վարպետության մի դպրոց, որը նրանց ուղղորդեց հետագա

տարիներին նույնպես։

Մկրտիչ Թաշճյանը, ինչպես հիշում է Գուրգեն Ջանիբեկյանը, նախ ստեղծեց «դերասանական կուռ անսամբլ», նրանցից յուրաքանչյուրին օգնելով գտնել իր «դերի բանալին»։ Ռեժիսորական ցուցմունքներից բացի, նա, բեմում նույնպես, կերպարի որքան անսպասելի, նույնքան համոզիչ լուծումներով, խաղընկերներին մղում էր ստեղծագործական հայտնությունների, իրենց ունակությունների լիարժեք դրսևորմանը։ Ջանիբեկյանը, Թաշճյանի Կորրադոյի կողքին, հանդես եկավ Պալմիերիի դերով, «Օթելլոյում», Կասիս էր, իսկ «Նամուսում»՝ Սեյրան։ Սեյրանի դերն էլ դարձավ նրա արտիստական կյանքի կարևոր ձեռքբերումներից մեկը, որը Մկրտիչ Թաշճյանն ընկալեց որպես սեփական հաջողություն։ Նրա «ուրախությանը չափ չկար»։ Հիշում է Ջանիբեկյանը։

«Դերասան ես դառնում, սիրելիս, դերասան... Գիտե՞ս ինչ երջանկություն է դա։ Փառքով պիտի մտնես Երևան, փառքով...»։

Ինքը՝ Մկրտիչ Թաշճյանը, գիտեր այդ երջանկության գինը, երբ, յուրաքանչյուր դեր կերտելիս, կարողանում է գտնել կերպարի իր լուծումը, այն դարձնելով ընդունելի ինչպես խաղընկերների, այնպես էլ՝ հանդիսատեսի համար։ Ի հակադրություն Կորրադոյի, նա, որոշ վերապահությամբ էր մոտենում Շեքսպիրի Օթելլոյին, և, ասես, կողքից դիտելով, տալիս նրա մարդկային էության գնահատականը։ Կերպարը մեկնաբանելիս այս եղանակը հարում է Բերթոլդ Բրեխտի ստեղծագործական սկզբունքներին, բնութագրելով որպես «օտարմար էֆեկտ»։ Բեմում, դերասանը հերոսի նկատմամբ իր վերաբերմունքը ցուցադրելուց բացի, «տալիս է նրա հասարակական արժեքը», հանդիսատեսին հանձնելով «տվյալ պերսոնաժին ար-

ժանի վերաբերմունքի բանալին»։ Ներկայացնելով Օթելլոյի իր ընկալումը, Թաշճյանը գրում է. «Օթելլոն ինձ չի հուզում։ Այդ դերում ես ներքուստ չեմ կարողանում նախապատրաստվել մի սոսկալի և կանխամտածված սպանության։ Նման քայլն անելու համար ես ուժ չեմ գտնում կուտակել և սնել իմ մեջ ինչ-որ անմարդկային ատելություն դեպի սիրած կինը։ Հետևաբար և, ներքին, ինքնաբերական, անմիջական խաղի չեմ կարողանում հասնել»։ Այստեղից՝ Օթելլոյի բոլորովին նոր և անսովոր մի մեկնաբանում, որը, թերևս, մոտ է Ալեքսանդր Պուշկինի ընկալմանը։ Ըստ Պուշկինի, Օթելլոյի ողբերգությունը ոչ թե խանդի, այլ՝ սիրած կնոջ հանդեպ հավատը կորցնելու ողբերգություն է։

Ելնելով այս դրույթից, Թաշճյանի Օթելլոյի բացատրությունը Դեզդեմոնայի հետ, հիասթափված մարդու զուսպ մեղադրանք է, բայց ոչ՝ խանդի անսանձ դրսևորում. «ոչ մի ոռնոց կամ մռնչոց չէիր լսի, հիշում է Գուրգեն Ջանիբեկյանը, ամեն ինչ խաղարկվում էր կիսատոներով, երբեմն նույնիսկ շշուկով, մի հեզմական ժպիտով անգամ, ասես նա ծիծաղում էր աշխարհի, մարդկանց վրա, որ չեն հավատում բարոյն ու գեղեցիկին։ Ես պարզապես ապշել էի Օթելլոյի այդպիսի անսովոր նկարագրի առաջ...

(...) Ջգուն էինք Օթելլոյի խորը, բորբոքվող, աքցանների մեջ առնված հոգին, որն ուզում էր ծչալ, բայց չէր կարողանում, խեղդվում էր իր իսկ սահմանած կապանքների մեջ»։

Կերպարի դիմամիկան ընդգծող, դարձյալ ըստ Ջանիբեկյանի բնորոշման՝ «արտակարգ նրբությամբ ու ներքին դրամատիզմով» է լուծված նաև Թաշճյանի Բարիստոլայը՝ Ալեքսանդր Շիրվանզադեի «Նամուսում»։ Նշենք, որ Հովհաննես Աբեյանի Բարիստոլայը, որն այդ տարիներին համարվում էր առավել հաջողվածներից մեկը, ուներ միշտ հակառակ նկարագիր. ընդգծված դիմախաղի վրա կառուցված նրա կերպարը հախուռն, հաճախ անզուսպ մարդու տպավորություն էր թողնում։

(Շարունակելի)

Անահիտ ՉԹՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու

ԳԻՏԱԺՈՂՈՎ ԻԶԵՎԱՆՈՒՄ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում 2014 թվականի ապրիլի 25-ին կայացավ հայ գիտական բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով, որի ընթացքում արծարծվեցին լեզվաբանության տարբեր ոլորտների հիմնախնդիրներին առնչվող հարցեր։

Գիտաժողովում բացման խոսքով հանդես եկան ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Սամվել Առաքելյանը, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վաչագան Ավագյանը, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվալյանը, նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող Ջենմա Բառնասյանը և գիտաժողովի քարտուղար Գարիկ Մկրտչյանը։ Բոլորը խիստ կարևորեցին նմանատիպ միջոցառման կազմակերպումը հենց Իջևանում՝ նշելով, որ դա խթան կդառնա մարզի ուսանողների գիտական առաջընթացի համար։ Պարոն Կատվալյանը ընդգծեց բարբառների ուսումնասիրության կարևորությունը՝ նշելով. «Բարբառը այն նյութն է, որից բաղկացած է գրական լեզուն»։ Պարոն Առաքելյանը հատկանշեց բարբառը որպես հոգևոր ժառանգություն։ Նա կոչ արեց խոսել գրական հայերենով՝ բնավ չնոռանալով բարբառները։

Գիտաժողովի մասնակիցները զեկուցումներ կարդացին երեք բաժանմունքներում՝ «Բարբառագիտություն», «Հատկան-

վանագիտություն, Համեմատական քերականություն, ոճագիտություն» և «Հայ բանահյուսություն, միջին հայերեն»։

Յուրաքանչյուր բաժանմունքում ներկայացվեց 7 զեկուցում։ Ունկնդիրների շարքերում էին բուհի ուսանողները, ովքեր ոչ միայն ուշադիր լսում ու գրառումներ էին կատարում իրենց մոտ, այլև ակտիվորեն մասնակցում էին քննարկումներին և հանդես գալիս հետաքրքիր հարցադրումներով։ Գիտաժողովի արդյունքներն ամփոփվեցին լիազուրմար միստում, որի ընթացքում միատի մախագահ Սամվել Առաքելյանը տեղեկացրեց, որ ներկայացված զեկուցումները լույս կընծայվեն առանձին ժողովածուով։

ԱՆՈՒՄ ԿԱՐԴԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ասպիրանտ




Վերսկսվում է «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսի թողարկումը



2003թ. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը և «Տաթև» գիտակրթական համալիրը ձեռնամուխ էին եղել լույս ընծայելու «Լեզու և լեզվաբանություն» ամսագիրը, որի աշխատանքները որոշ ժա-

մանակով դադարել էին։ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատողները հայտնեցին գիտական հանդեսի հրատարակությունը վերսկսելու մասին լուրը։ Այն լույս է տեսնելու մախիկի պես տարեկան երկու համարով՝ 6.5 մամուլ ծավալով։ Ամսագրի բարձր որակն ապահովելու նպատակով գործում են ինչպես տարբեր գիտությունների ականավոր մասնագետներից բաղկացած խմբագրական խորհուրդը, այնպես էլ բուն խմբագրական կազմը։

Ժողովածուում զետեղված նյութերն առնչվում են ոչ միայն հայերենագիտությանը, այլև ընդհանուր և տեսական լեզվաբանությանը՝ անկախ ուսամասիկովող լեզուներից, ուսումնասիրման սկզբունքներից և մեթոդներից։ Հանդեսում տեղ են գտնում հոդվածներ ոչ միայն հայերենով, այլև ռուսերենով և անգլերենով։ Ընդ որում՝ բուն նյութը ներկայացվում է նշված լեզուներից որևէ մեկով և ամբողջանում է մյուս երկու լեզուներով ամփոփագրերի հետ միասին։



ներում» խորագրով: «Անդարծություն» գիրքը հավաստում է, թե Յենրիկ Յովհաննիսյանը կարող է ոչ միայն եզակի հմայքով հայկական ռադիոյով կարդալ Յովհ.Թումանյանի պատմվածքները, ոչ միայն իմաստալից գրույցներ վարել հեռուստատեսության հայոց լեզվի, հայ արվեստի վերաբերյալ, այլև գրել ինքնատիպ բանաստեղծություններ, որոնք կիրթ ընթերցողին կարգեն հոգեհարազատության պահեր: Այդ քերթվածները չափածո փիլիսոփայական խոհեր են կյանքի վաղանցիկության, մարդու որոշ անկատարության, մարդուն այնքան հատուկ երազելու մշտական իրողությամբ:

Այդ խոհերում հնչում են Յին կտակարանի «Ժողովողի» մոտիվները, սակայն ծայրը նոր է, մեր օրերինը: Միա գոյի բնութագրման դիպուկ մի

իրավացի է բանաստեղծը, երբ «Դուլսինեա» քերթվածում ակնարկում է, թե ամեն տղամարդ Դոն Կիխոտի նման ունի իր Դուլսինեան, որը հաճախ մնում է երևակայության տիրույթներում:

Յ. Յովհաննիսյանի բանաստեղծությունների մի բաժինը կոչվում է «Պատմության փակուղիներում»:

Ես կկոչեի իրաշք բանաստեղծություն այն, որը խորագրված է «Նաիրի» սա մեր անցյալին և նաև սպասվելիք ապագային ուղղված աղոթք է:

*Առասպել ես դու և առեղծված,
Գալիս ես անասելի հեռվից,
Վկաներդ քարեր են տաշված,
Գրերդ, լեզուն քո անբիծ.
Այսքանը և հույս առ Աստված,
Աղոթքդ ի խորոց սրտից,
Եվ ի՞նչ է սրտումդ թաղված,
Ի՞նչ է այդ, որ վեր է քեզնից (էջ 47):*

Թե մի նոր սկիզբ այնտեղ, ուր կգաք (էջ 86):

Մեծ հայագետ Նիկողայոս Մառը Գրիգոր Նարեկացու «Մատենա ողբերգութեան» երկը համարել է անթարգմանելի. „Григорий Нарекский неперевожим”: Նույն միտքը տեսնում ենք Յ. Յովհաննիսյանի գրքում հետևյալ ձևակերպումով. «Բանաստեղծությունն սկզբունքորեն անթարգմանելի է. ինքն իր գոյածնն իր նյութով ու կազմակերպվածքով, որպես ավարտված, անմիջնորդելի իրականություն» (էջ 102):

Մեկնելով թարգմանության գաղտնիքները՝ նա նաև հիմնավորում է թարգմանության անփոխարինելի արժեքը:

Ուշադիր կարդալով թատերագետի թարգմանությունները՝ կարելի է եզրակացնել, թե դրանք հիմնականում հաջողված փոխադրություններ են, որոնք հայերենի հնարավորություններով փոխանցում են այլալեզու քերթվածի էությունը: Դրա առհավատյան ժուկովսկուն նվիրված բանաստեղծության վարպետ փոխադրությունն է:

Բերենք ընդամենը մեկ օրինակ Պուշկինից.

Հատված «Ջրահարսից».

Ամբողջ գիշեր ծերը մռայլ

Աչք չփակեց սարսափից

Ու չաղորթեց նա մյուս օրը

Են աղջկա հմայքից:

Ու կաղնուտը մթնեց նորից,

Մթնեց լուսինն ամպի տակ,

Ու աղջիկը ելավ ջրից,

Լուսնի լույսի պես գունատ (էջ 127):

Կարդալով Յենրիկ Յովհաննիսյանի «Անդարծություն» գիրքը՝ հիշեցի, թե նույնքան ընտիր բանաստեղծություններ ուներ նշանավոր լեզվաբան, ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը, որը 1990-ին գրած «Քառասունհինգի սերունդը» քերթվածից հիշում են հետևյալ դիպուկ տողերը.

Հաղթանակ տարած, բայց

պարտված կյանքում,

Հարվածներ կրած, բայց չեկած ծնկի

Կվարձատրվեմք միայն գալիքում

Մենք՝ զավակներս քառասունհինգի:

Աելիտա ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՍՈՒԱՏ

Առավել հարմար վերնագիր չգտա այն գրախոսության համար, որ նվիրվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, նշանավոր թատերագետ և արվեստաբան Յենրիկ Յովհաննիսյանի «Անդարծություն» բանաստեղծական ժողովածուին: Շատ գեղեցիկ իրատարակություն է. գեղեցիկ է ոչ միայն կազմի նկարը՝ կամարի միջով անցնող տղամարդ՝ մեջքից երևացող, պայուսակով, վերարկուով և գլխարկով, քայլում է դեպի խորքը, որն արևային լույսի մեջ է:

Գրքում Յ. Յովհաննիսյանի սեփական բանաստեղծություններն են և չափածո թարգմանությունները՝ հիմնականում Պուշկինից (թվով 50), նաև Տյուտչևից, Նադսոնից, Ռիկեից, Սևերյանից և Բալմոնտից:

Թարգմանություններից առաջ դրված է թարգմանության էությանը վերաբերող ակնարկ՝ «Բանաստեղծության թարգմանելիության սահման-

նմուշ, որը խորագրված է „Existencia” («Գոյ», «Գոյություն»).

*Գերագույն զովածքն ես հողի,
Հինգերորդ տարրը բնության,
Հավերժությունն է քո ուղին,
Սրտումդ դողը մահվան:*

*Միաբեկ ես դու, և իզուր եմ
Կեղեքում քեզ հոգս ու թախիծ,
Ազատ է թողել քեզ Տերը,
Ասել է ծանիր քեզ և ինձ... (էջ 8):*

Խորհմաստ է «Ընկերություն» քերթվածը, որը զգուշացում է մարդկանց, թե վիրավորանքը, զղջումը, միևնույն է հետք են թողնում մարդկանց հոգիներում.

*Ներում ենք իրար ու չենք մոռանում
Իրար հասցրած վերքերը երբեք (էջ 32):*

Միալված չեմ լինի, եթե ասեմ, թե Յ. Յովհաննիսյանի որոշ քերթվածներ ունեն կլասիցիզմի վսեմությունը՝ չունենալով վերջինիս վերացականությունը: Դրանք խիստ կենսական են:

Պուշկին-Թումանյան շառավիղի մեջ է բանաստեղծ Յ. Յովհաննիսյանը, և դա հատկապես ակնհայտ է նրա քառյակներում: Դրանց մեջ մեծ թիվ են կազմում միակ հավերժին՝ ժամանակին ուղղվածները.

*Ամեն պահ կորցնում ենք պահը,
Ու պահը մեզ չի սպասում,
Մեր սրտում կորստի ահն է,
Արթուն լինենք, թե երազում (էջ 63):*

Քառյակներում ևս ինքնասուզումն է, ինքնաճանաչումը, որը հասուն տարիքում ամեն խելացի անհատ կատարում է ինքնադատաստանի ատյանի առաջ կանգնեցնելով սեփական անձը, արձանագրելով արած-չարածի հանրագումարը, մտածելով նաև հավերժի մասին.

*Մեզնից դուրս, անհայտ ի՞նչ կա այն
կողմում,*

*Լո՞ւյս է, թե խավար այնտեղ, ուր չկանք,
Ցերե՞կ, թե գիշեր, մի՞նչ, թե արթնացում,*

Երևանի փողոցների լուսավորության պատմությունից

Մինչև 20-րդ դարի սկզբները Երևան քաղաքի փողոցների լուսավորումը կատարվում էր նավթային լապտերներով: 1870-ական թվականներին լուսավորության հարցերը տնօրինում էին քաղաքային իշխանությունները: 1863 թ. Երևանի փողոցների լուսավորության համար օգտագործվում էր 11 նավթային լապտեր: Քաղաքի լուսավորությունը 1897 թ. սկսած տրվում էր կապալով՝ մեկ կամ երեք տարի ժամկետով: 1878 թ. Երևան քաղաքի փողոցներում 74 լապտեր կար, 1880 թ.՝ 85, 1881 թ.՝ 100, 1906 թ.՝ 722, 1913 թ.՝ 228: Ինչպես երևում է բերված թվերից, Երևանում նավթային լապտերների թիվը մինչև 1906 թ. գնալով ավելացել է, իսկ դրանից հետո՝ կտրուկ անկում ապրել: Այս հանգամանքը պայմանավորված է 1907 թ. «Ամպեր» ընկերության էլեկտրակայանի շահագործման հետ: Երևանի կենտրոնական մասերում գտնվող նավթային լապտերների մեծ մասը փոխարինվեց էլեկտրական էներգիայով աշխատող լապտերներով: Չնայած էլեկտրակայանի առկայությանը, նավթային լապտերները շարունակեցին գոյություն ունենալ մինչև 1920-ական թվականները:

Երևանում օգտագործվում էին երկու տեսակի լապտերներ՝ հասարակ և «Գալ-

կինի»: 1880 թ. կապալառուն 83 վառվող լապտերի համար ստացել է 2058 ռուբլի 50 կոպեկ, 1889 թ. փողոցների, պուրակների լուսավորության ծախսերը կազմել են 4784 ռուբլի, 1913 թ.՝ 2451 ռուբլի:

Նավթային լապտերները վառվում էին մուլք ընկնելուց հետո՝ մինչև ժամը 23-ը: Աստաֆյան փողոցում (այժմ՝ Աբովյան) 1913 թ. 1500 մետր երկարության վրա կար երկու լապտեր, իսկ քաղաքի ծայրամասերը, մուլք ընկնելուց հետո, խորասուզվում էին խավարի մեջ: Նորքի փողոցները չէին լուսավորվում: Թաղամասի լուսավորության վիճակը ծանր էր նաև 20-րդ դարի սկզբներին: 1905 թ. Նորքի փողոցներում կար ութը հին նավթային լապտեր, որոնք չէին լուսավորում նույնիսկ մի քանի մետրի վրա:

Երևանի արտաքին լուսավորության ցանցը շահագործման է հանձնվել դեռևս 1954թ.: Մինչև 1992թ. այն գործել է 928 փողոցներում, մայրուղիներում, հրապարակներում և այգիներում. ընդհանուր երկարությունը՝ 795 կմ տարբեր մակնիշի լուսատուներ՝ 49,909 հատ տեղակայված էին 31,279 հեմասյունների վրա:

1967 թվականին Երևանի փողոցներում վառվում էին ավելի քան 30 հազար էլեկտրական լամպեր: Քաղաքը օրական



օգտագործում էր ավելի քան վեց միլիոն Կվտժ էլեկտրական էներգիա:

2006 թ. ընթացքում Երևանի քաղաքապետարանի ծրագրով՝ 500 միլիոն դրամ, վերակառուցվել է 13 փողոցների և հրապարակների 53,7 կմ արտաքին լուսավորությունը: Համայնքների միջոցներով՝ 258.2 միլիոն դրամ, վերակառուցվել են 32 կմ արտաքին լուսավորության ցանցի տարբեր հատվածներ:

Ներկայումս Երևանում լուսավորված է 895 փողոց: Մայրաքաղաքի արտաքին լուսավորության խնդիրներով զբաղվում է «Երբաղլույս» ՓԲԸ-ը: 1990թ. լուսավորության պատկերը Երևանում կտրուկ փոխվեց: Մնացին հատուկեմտ լամպեր, որոնք լուսավորում էին քաղաքի փողոցները: Վիճակը սկսեց աստիճանաբար լավանալ 2000թ. հետո: Այսօր լուսավորված են քաղաքի գրեթե բոլոր բակերը: Լուսավորված է Երևանի գրեթե 92 տոկոսը: Հետագայում նախատեսվում է օգտագործել լուսադիոդային լամպեր, որոնք խնայողական են և ուշ են շարքից դուրս գալիս: Մայրաքաղաքի լուսավորությունը երբեք ռեժիմ ունի՝ նորմալ, գիշերային և տոնական: Քաղաքը բաժանված է յոթ տեղամասի: Բոլոր կամուրջների և գետնանցումների, ինչպես նաև գլխավոր բոլոր փողոցների լուսավորությունը շուրջօրյա է:

Ստեփան ՊԱՊԻՅԱՆ

Հայկական էներգետիկական ակադեմիայի նախագահ, տեխնիկական գիտությունների թեկնածու

ՄԱՐԴԸ ԱՌԱՋԱՅԵԼ Է... ԿԱՊԻԿԻՅ

Ձեր ուշադրությանը ներկայացվող ծաղրանկարները, որ արվել և հրապարակվել են ուղիղ 100 տարի առաջ, դեռ չափազանց մեղմ արտահայտություն են այն համընդհանուր վրդովմունքի, զայրույթի և շփոթության, որ առաջացրին Դարվինի «Տեսակների ծագումը» գիրքն ու նրա էվոլյուցիոն տեսությունը:



Դարվինը հրավիրում է կապիկին թռչել օդակի միջով:

Դարվինը հույս ուներ, որ իր էվոլյուցիոն տեսության բնական ընտրության սկզբունքը դառնալու է ջահ, որ լուսավորելու և բացատրելու է մարդու առաջացման առեղծվածը: Սակայն այդ ջահը, լույս տալու փոխարեն, բոցավառեց վառողի տակառը: Ինքնագոհ ու ինքնահավան բրիտանացիները չէին ուզում հաշտվել ու հավատալ, որ մարդիկ ինչ-որ ժամանակ ուրիշ տեսք ու կերպարանք են ունեցել, և որ նեանդերթալյան մարդը եղել է իրենց նախնին (ի դեպ, նեանդերթալյան մարդու կմախքը հայտնաբերվել է հենց այդ ժամանակ):

Գրեթե բոլոր նրանք, որ



Վիեննական թերթերից մեկում 1882 թվականին տպագրված ծաղրանկարում կապիկները սգում են իրենց բարերար Զարլզ Դարվինի մահը... «Դարվինն այլևս չկա,- ողբում են կապիկները.- այսուհետ ո՞վ է պաշտպանելու մեր իրավունքները»:

հանդես եկան էվոլյուցիոն տեսության դեմ, պարզապես չէին հասկացել Դարվինին և համոզ-



1876 թվականին հրապարակված ծաղրանկարում կապիկը խնդրում է ընկերուհուն, կտրել իր պոչը: Նա շտապում է օր առաջ մարդ դառնալ:

ված էին, թե նա ապացուցում է, որ ժամանակակից մարդն անմիջականորեն առաջացել է կապիկից:

Անգամ անգլիական պետական գործիչ Բենջամին Դիզրայելին, որ լայնախոհ ու չափազանց զարգացած մարդ էր, մույնպես համակվեց ընդհանուր թյուրիմացության այդ վարակով և ասաց. «Ըստ Դարվինի, մարդը կամ կապիկ է, կամ՝ հրեշտակ: Ես, օրինակ, կգերադասեի իմ «հրեշտակային նախասկզբը»:

Ի դեպ, էվոլյուցիոն տեսության շուրջ վեճերը շարունակվում են նաև այսօր. 1972 թվականին կրթության գործերով Կալիֆոռնիական խորհրդում բուռն վեճեր առաջացրեց այն պահանջը, որ երեխաներին պետք է ծանոթացնել ոչ միայն Դարվինյան էվոլյուցիոն տեսության, այլ նաև մարդու աստվածային արարման աստվածաշնչյան վարկածի հետ: Այս առաջարկը մերժվեց, սակայն խորհուրդը միաժամանակ առաքելեց էվոլյուցիոն տեսության անվերապահ ընդունման դեմ:

ԻՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՆՁԵՌՈՑԻԿ

Պարզվում է, որ այսօր շատ սովորական և ամենուր գործածվող անձեռնոցիկը կարող է շատ ավելին պատմել մարդու մասին, քան նա կցանկանար:

Ասում են, որ ֆրանսիական մեծ հեղափոխությունից առաջ թագավորական պալատ նախաճաշի է հրավիրվել մի պատվարժան պարոն, որը նախարարի պաշտոնի հավակնորդ էր:

Թագավորի գույգի հետ նստելով սեղանի մոտ, պարոնը ծնկներին փռեց անձեռնոցիկը, վերցրեց խաշած հավկիթը, դանակով մեջտեղից երկու կես արեց և ճաշակելով դրա պարունակությունը, անձեռնոցիկով մի լավ սրբեց բերանը:

Թագավորն ու թագուհին ուշադիր դիտում էին պարոնի «բարբարոսական» ուտելու ձևը, սակայն ոչնչով ցույց չէին տալիս իրենց հիասթափությունը: Հրաժեշտ տալիս նրանք առաջվա նման բարյացակամ էին և սիրալիր: Պարոնի գնալուց հետո թագավորը հրամայեց այդ պարոնին այլևս պալատ չթողնել: Նախարարի պաշտոնը շնորհվեց մեկ ուրիշի, իսկ վերոհիշյալ պարոնը այդպես էլ չհասկացավ, թե ինչու նախարար չդարձավ: Նրա մտքով իսկ չէր անցնում, որ իր ծախողվելու պատճառը խաշած հավկիթն էր և չարաբաստիկ անձեռնոցիկը:

Ըստ կանոնակարգի նա կիսածալած անձեռնոցիկը պետք է փռեր ծախ ծնկին, հավկիթը գդալով կոտրեր բուք կողմից և մույն գդալով ուտեր միջուկը: Ուտելուց հետո, անձեռնոցիկի ծայրի թեթև հպումով մաքրեր շրթունքները:

Թագավորի որոշումը տրամաբանական էր. եթե մարդը չգիտե խաշած հավկիթ ուտելու ընդունված կարգը և չի կարողանում ճիշտ օգտվել շատ պարզ անձեռնոցիկից, ապա, թույլ տվեք հարցնել՝ կարելի՞ է արդյոք նրան վստահել պետական գործերը:

Այսօր դժվար է ճշգրիտ ասել, թե անձեռնոցիկը երբ դարձավ թագավորի մարդու կենցաղի շատ անհրաժեշտ և օգտակար բաղկացուցիչ: Ամենայն հավանականությամբ անձեռնոցիկը հնարել են խնայողություն սիրող տնային տնտեսուհիները, որոնք արդեն հոգնել էին ահռելի մեծության սփռոցները լվանալու հոգսից: Մինչև անձեռնոցիկների երևան գալը, ըստ վարվեցողության կանոնների, սեղանի սփռոցով կարելի էր սրբել ձեռքերը, մաքրել շուրթերը և անգամ դատարկել քթի պարունակությունը: Եվ եթե նկատի ունենանք, որ այն ժամանակներում հիմնականում ուտում էին ձեռքերով, ապա ամեն խնջույքից հետո սփռոցը պետք էր դնել շարտել: Եվ ահա գտնվեց մի տանտիրուհի, որը հսկա սփռոցը բաժանեց բազմաթիվ կտորների և քեֆ անողներից ամեն մեկի առջև դրեց մեկ անձեռնոցիկ: Իսկ պալատական շրջաններում անձեռնոցիկի օգտագործման կերպը դարձավ վարվեցողության մի ամբողջ համակարգ: Եվ այն բանից, թե մարդը ինչպես է օգտվում անձեռնոցիկից, դատում էին նրա դաստիարակության, քաղաքավարության կանոնների իմացության մասին: Եվ պատահական չէր նաև, որ սեղանին դրված սպասքներից և հատկապես անձեռնոցիկից օգտվելու կանոնները մանկուց էին սովորեցնում ազնվական ընտանիքների զավակներին, ինչպես ձիավարությունը, սրամարտը, հրաձգությունը և պարը:

ՌՈՍՍԻՆԻՒ ՓՈՂՈՅԸ

Սինյոր Պիկկոլոն բացեց պատուհանը և ձայն տվեց անցորդին.

- Հլա մի ըրալե կանգ առեք:

- Ի՞նչ է պատահել:

- Ես հիմա ձեզ կբացատրեմ, թե որտեղ է գտնվում Ռոսսինի փողոցը: Կգնաք ուղիղ, հետո կթեքվեք աջ, ապա ձախ և մի բանի ըրալեց կլինեք տեղում:

- Շատ շնորհակալ եմ, սակայն ինձ բացարձակապես չի հետաքրքրում, թե որտեղ է գտնվում այդ փողոցը: Ես հակառակ կողմն եմ գնում:

- Իսկ ինձ համար էլ կարևոր չէ, թե ինչն է ձեզ հետաքրքրում: Բայց, որ Ռոսսինի փողոցը կարող եք գնալ միայն այն ձևով, ինչպես ես բացատրեցի, դա անառարկելի է: Կարծում եմ, հասկացա՞ք ինձ:

- Ներողություն, հարգելիս, բայց ձեր բացատրությունն ինձ ամենևին պետք չէ: Ասացի, չէ՞, ես ուրիշ տեղ եմ գնում:

- Ես դա արդեն լսեցի:

- Դե ուրեմն ձեզ պահեք ձեր խորհուրդները:

- Այ թեզ անշնորհակալ մարդ: Մի՞թե ձեզ համար հաճելի չէ, որ ես ինքնակամ ուզեցի ծառայություն մատուցել ինձ համար բոլորովին անծանոթ մի մարդու:

- Բայց, գրողը տանի, ես առանց ձեզ էլ հրաշալի գիտեմ, թե որտեղ է Ռոսսինի փողոցը և ինչպես գնալ այնտեղ:

- Մի, մի ի՞նչ արան նայեք: Իսկ ինչո՞ւ հենց սկզբից ինձ չասացիք այդ մասին: Ես իմ թանկ ժամանակը վատնում եմ նրա վրա, ինձ ենթարկում մրսելու վտանգի, իսկ ինքը, պարզվում է, գիտի ճանապարհը: Անբարոյական և անամոթ մարդ եք դուք, ահա թե ինչ կասեմ ձեզ,- զայրացած հայիոյեց սինյոր Պիկկոլոն և շրիկոցով փակեց պատուհանը:



ՀԵՏԱՔՐԵՐ Է

Երբ չարաշահում ես ջուրը

Ռուսաստանում վաղուց հայտնի էր, որ օրական մեկ դույլ ջուրը մահացու է: Վերջերս սույն ճշմարտությանը հասու եղան նաև ամերիկացիները: Իհարկե, այն բանից հետո միայն, երբ ջուր շատ խմելու պատճառով այս աշխարհին հրաժեշտ տվեցին Միացյալ Նահանգների բանակի երեք նորակոչիկ զինվորներ:

Հիմա արդեն փաստված է, որ եթե օրը խմում են 10 լիտրից ավելի ջուր, կամ ժամում մեկ լիտրով քիչ ավելին, մարդկային օրգանիզմը չի կարողանում ազատվել ավելցուկ հեղուկից: Այս համագամքը հանգեցնում է ուղեղի այտուցման և արագահաս մահվան:

Մի՞թե...

Բրիստոլի համալսարանի հետազոտողները հաստատել են, որ փմթի, անվա երեխաները ավելի քիչ են հիվանդանում ասթմայով և էկզեմայով: Պարզվում է, որ երբ երեխան աղտոտվում է, նրա օրգանիզմը ենթարկվում է վարակների և բակտերիաների գրոհի: Սույն պարագայում գործի է անցնում օրգանիզմի պաշտպանական մեխանիզմը, և մանկան իմունային համակարգը հարկադրված սովորում է աշխատել ու մարզվել: Միևնույն ժամանակ, ինչպես գտնում են գիտնականները, չափազանց մեծ հոգաժողությունը երեխաների հիգիենայի և ստերիլ միջավայր ստեղծելու համար, թուլացնում է երեխաների իմունային համակարգը, և նրանք ավելի հաճախ են ենթարկվում տարբեր հիվանդությունների:

Ծեծելու վնասների մասին

Կոլումբիական համալսարանի գիտնականները բացարձակ ճշտությամբ պարզել են, որ երեխաները ագրեսիվ են դառնում և մեծանում չար մարդիկ, երբ փոքր ժամանակ նրանց պատեհ-անպատեհ ծեծում են:

Բացի ագրեսիվությունից, մեծ երեխաներին հետագայում բնորոշ է դառնում հակահասարակական վարքագիծը և մուլիսկ՝ նրանք կարող են դառնալ մտավոր հետամնացներ:

Գ ի ր ու թ յ ու Ն

Գլխավոր խմբագիր՝
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է պապագրության՝ 22.05.2014 թ.:

"ТІТУТІОН" ("Hayka") gazeta HAH PA